

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 7694 ՏԱՐԻ, ԹԻԻ 225 (21567) ՈՒՐԲԱԹ, 5 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2003 10 ԷՁ

ՍԱՀԱԿԱՇՎԻԼԻ ՄՕՏ ՕՐԵՆ  
ԶԱՄԱՆԵՐ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Նախընտրական քարոզչության նպատակով, մտ օրէն Չառախը պիտի այցելէ Վրաստանի նախագահութեան թեկնածու, «Ազգայնական Շարժում» կուսակցութեան ղեկավար Միխայիլ Սահակաշվիլի:  
Հակառակ Սահակաշվիլի հանդէպ Չառախըի հայութեան բացասական տրամադրութիւններուն, Ախալքալաքի եւ Նինոծմիւնտայի ղեկավարները Թիֆլիսի մէջ յայտնած են, թէ պատշաճ ընդունելութիւն պիտի կազմակերպեն:  
Միւս կողմէ, նկատելի է, որ այս օրերուն Ախալքալաքի եւ Նինոծմիւնտայի մէջ յարաբերաբար հանդարտած է տեղւոյն իշխանութիւններուն դէմ յարուած մթնոլորտը: Կ'ենթադրուի, որ բոլոր կողմերը կը նախապատրաստուին նախագահական ընտրութիւններուն եւ միջեւ Յունուար 4 Չառախըի մէջ իշխանափոխութիւն տեղի չ'ունենար:

## ՊՐԱԶԻԼԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԱ ՄԻՎԱ ԺԱՄԱՆԵՑ ԼԻԲԱՆԱՆ



Պրապիլի նախագահ Լալա Տա Միվա երէկ յետմիջօրէի ժամը 4:00ին պաշտօնական եռօրեայ այցելութեամբ մը ժամանեց Լիբանան, ուր ընդունուեցաւ իշխանութեան երէք պետերուն, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Տըրպիլի, փոխ վարչապետ Իսամ Ֆարխի եւ մեծ թիով նախարարներու եւ երեսփոխաններու, ինչպէս նաեւ քաղաքական ու բարձրաստիճան անձնաւորութիւններու կողմէ:

Երեկոյեան, նախագահ Տա Միվա Պապատայի մէջ ընդունուեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի կողմէ: Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրի, փոխ վարչապետ Իսամ Ֆարխ, նախարարներ, ինչպէս նաեւ պրապիլեան պատուիրակութեան անդամներ:

Նշենք, որ այս հանդիպումէն առաջ նախագահներ Տա Միվա եւ Լահուտ ունեցան դռնփակ հանդիպում մը:

Հանդիպումէն ետք, նախագահներ Լահուտի եւ Տա Միվայի հովանաւորութեամբ լիբանանցի նախարարներ պրապիլիցի իրենց պաշտօնակիցներուն հետ ստորագրեցին համաձայնագիրներ, ինչպէս՝ լիբանանեւ-պրապիլական երկկողմանի յարաբերութեան եւ գործակցութեան գերագոյն խորհուրդի ստեղծում, պրօսաշրջութեան, արհեստագիտութեան, երկրագործութեան եւ թմրեցուցիչի դէմ պայքարի ծիրէն ներս երկկողմանի համաձայնագիրներ:

Այս տեղի ունեցաւ ընդհանուր նիստ մը, որուն ընթացքին խօսք առաւ նախագահ Լահուտ եւ շեշտեց, թէ Լիբանան հետամուտ է Պրապիլի հետ իր յարաբերութիւններու բարելաման եւ կոչ կ'ուղղէ արաբական եւ Լատինական Ամերիկայի երկիրներուն միջեւ խորհրդածոյցով մը կայացընելու:

Նախագահ Տա Միվա իր կարգին շեշտեց, որ հարկ է լիբանանեւ-պրապիլական յարաբերութիւնները բարելամել գրեթէ բոլոր մարպերէն ներս:

Հանդիպումէն ետք նախագահ Լահուտ նախագահական պալատին մէջ ընթրիք մը սարքեց ի պատիւ Տա Միվայի: Ընթրիքին ներկայ գտնուեցան խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի, վարչապետ Ռաֆիք Հարիրի, պետական, պիւնուրական եւ բարձրաստիճան բազմաթիւ պաշտօնատարներ:

«ՄԵԹՐՈՓՈԼԻԹԸՆ» ՊԱՆԴՊԱԿԻՆ ՄԷՁ

Նշենք, որ նախագահ Լալա Տա Միվա Պէյրութի միջազգային օդակայանէն մեկնեցաւ «Մեթրոփոլիթըն» պանդոկ, ուր ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիին եւ վարչապետ Հարիրիին, որոնց հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ Լիբանան – Պրապիլ երկկողմանի յարաբերութիւնները:

Կը նախատեսուի, որ այսօր նախագահ Տա Միվա խօսք առնէ խորհրդարանին մէջ եւ երեկոյեան ընթրիք մը սարքուի ի պատիւ իրեն՝ վարչապետ Հարիրիի կողմէ:

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի տեղեկատու գրասենեակը նկատել տուաւ, որ վարչապետը նախագահ Տա Միվայի հետ իր հանդիպումին ընթացքին շեշտած է, որ օրերը պիտի փաստեն, թէ մասնակի լուծումները ոչ մէկ արդիւնքի պիտի յանգին, ընդհակառակը՝ պիտի բարդացնեն հարցերը, շրջանին մէջ յառաջացնելով յաւելեալ յուսալքում: Ան աւելցուց, որ միակ լուծումը միջազգային օրէնքի գործադրութեան ապաւինիլն է:

## ՌՈՒՍԻԱ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ՎՐԱՍՏԱՆԸ

Վրաստան անջատողական իր շրջաններուն պիտի չվերամիանայ, եթէ «Ռուսիոյ բարեկամ» կեցուածք մը չորդեգրէ, զգուշացուցած է Պետական Տուժարի փոխ նախագահ Վլատիմիր Լուքին երէկ:

«Միայն Ռուսիա, ո՛չ այլ երկիր, միայն Ռուսիա կրնայ օժանդակել Վրաստանի վերամիացման, եթէ կովկասի մէջ Ռուսիոյ շահերը նկատի առնուին», բացած է ան:

Մոսկուայի մէջ մամուլային ասուլիսի մը ընթացքին, Լուքին ըսած է, որ եթէ այդ շահերը նկատի առնուին, Ռուսիա գործընթացին մասնակից պիտի չըլլայ «եւ ո՛չ մէկը անոր տեղը պիտի գրաւէ»:

Ներկայիս Վրաստանի նոր ղեկավարութիւնը ունի երկու ընտրանք. միացեալ Վրաստանի մը ստեղծումը՝ «գերիշխան, սակայն շատ բարեկամ Ռուսիոյ հանդէպ», կամ՝ «Վրաստան կը քայքայուի», յայտնած է ան:

«Ինչ ալ ըսեն ամերիկացի մեր գործակիցները, անոնք կարողութիւնը չունին Վրաստանը դէպի ամբողջական կառավարութեան մը վերստեղծում առաջնորդելու հարցը լուծել», դիտել տուած է ան:

Վրաստան ունի անջատողական երկու շրջաններ՝ Աբխազիա եւ Հարաւային Օսեթիա եւ մէկ կիսաինքնավար նահանգ՝ Աճարիա, ուր կեդրոնական կառավարութիւնը գրեթէ ազդեցութիւն չունի:

Երէք շրջաններուն բարձրաստիճան ներկայացուցիչներ ժողովներու համար Մոսկուա փոխեցանք են Վրաստանի նախկին նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի հրատարակած «Եւրոպայի մեր թիֆլիսի նոր ղեկավարներուն հետ բանակցի»:

### ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽԱՐԻՍՆԵՐՈՒ ԳԾՈՎ

Միւս կողմէ, Ռուսիոյ բանակի սպայակոյտի փոխ հրամանատար Եուրի Պալուշեւսքի երէկ յայտնած է, թէ Մոսկուա կը ծրագրէ Վրաստանի մէջ իր մնացեալ երկու զինուորական խորհրդները վերադարձնել, սակայն անկախ տասնամեակի մը պէտք ունի վերադարձող ուժերուն համար կեդրոններու կառուցման:

Ան ըսած է, որ ռուս եւ վրացի զինուորական մասնագէտներ երկու շաբաթ առաջ ժողով գումարած են քննարկելու համար գանազան հարցեր, որոնց կարգին՝ ռուսական խորհրդներու հարցը:

### ՈԱՍՍՖԵԼՏ ԱՅՍՈՐ ՎՐԱՍՏԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

Մինչ այդ, Թիֆլիսի մէջ ամերիկեան ղեկավարութեան երէկ յայտնած է, թէ Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ այսօր Վրաստան պիտի այցելէ:

(ԱՅՓ)

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԽՄԲԱԿՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԳԱՀԻՐԻՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Պաղեստինեան արմատական տասներկու խմբակներ երէկ մասնակցեցան Գահիրէի բանակցութիւններուն, որոնց նպատակն է զինադուլի համաձայնութիւն մը կայացնել դադրեցնելու համար Իսրայէլի դէմ յարձակումները՝ առիթ տալով խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսման:

Գահիրէի ժողովին մասնակցողները յայտնեցին, որ հանդիպում ունեցած են Եգիպտոսի գաղտնի սպասարկութեանց պետ Օմար Սուլէյմանի հետ, որ անցեալ Յունիսի հովանաւորած ու միջնորդած էր զինադուլ մը հաստատելու համար: Յունիսի զինադուլը 59 օր դիմացած էր եւ յարձակումները վերսկսած էին Օղոստոսին, պատճառ դառնալով որ խաղաղարար ճիգերը արգելակուին եւ խաղաղութեան ճամբու քարտէսը գործադրութեան չգրուի:

Գահիրէի բանակցութիւններուն մասնակցողներուն կարգին են Համաս, Իսլամական ժիհատ եւ Ֆաթհ, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Շասէր Արաֆատի կ'ենթարկուի: Խօսելով բանակցութիւններուն մասին, Արաֆատ Ռամալլայի մէջ ըսաւ, որ պաղեստինցիները պատրաստ են հաստատելու ու գործադրութեան ղեկու գինադուլ մը: Արաֆատ յոյս յայտնեց, որ Իսրայէլ այ պատրաստ ըլլայ:

Համասի պաշտօնատար Սալիտ Սիամ եւ Ժիհատի ղեկավար Մոհամէտ Հիւտի, որոնք անձնապէս չեն մասնակցած ժողովին, պաղեստինեան շրջաններէն յայտարարեցին, որ իրենց շարժումները զօրավիզ կը կանգնին համաձայնութեան մը, որ պաղեստինցի եւ Իսրայէլացի քաղաքացիները հեռու կը պահէ կրակէ: Անոնք դիտել տուին, որ իրենք չեն փոփոխել, որ քաղաքացիները թիրախ դարձնել եւ թէ անոնք թիրախ կը դառնան այն ատեն միայն երբ Իսրայէլ ջարդեր կը կազմակերպէ եւ ոճիրներ կը գործէ: Հիւտի աւելցուց, որ զինադուլէ մը աւելի կարեւոր է յանգիլ համաձայնութեան մը, որ կը խնայէ քաղաքացիները:

Բանակցութիւններուն սկսելէն կարճ ժամանակ մը ետք, պաղեստինցի վարչապետ Ահմէտ Քորէյ յայտարարեց, որ ինք այլ Գահիրէ պիտի ուղղուի մասնակցելու համար ժողովին:

Շար.ը՝ էջ 10

## ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԷՁ

### ՆԱԽԱԳԱՀ ՔՈՇԱՐԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՊԵԼՃԻՔԱՅԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՅԵՏ

Հայաստանի նախագահ Ռուպիք Քոշարեան երէկ Պրիւքսէլի մէջ շարունակեց եւրոպական կառոյցներու ղեկավարներու հետ իր հանդիպումները:

Երէկ առաւօտուն, ՊելՃիքայի թագաւորական պալատին մէջ Ալպէր Բ. թագաւորին հետ տեսակցելէ ետք, նախագահ Քոշարեան հանդիպում ունեցաւ Եւրոպական Խորհրդարանի նախագահ Փէթ Քոքսի եւ Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտտիի հետ:

Քոշարեանի եւ Քոքսի մամուլային միացեալ ասուլիսին ընթացքին Եւրոպացի պաշտօնատարը գոհունակութիւն յայտնեց եւրոպական չափանիշներուն հետեւելու հայաստանի պատրաստակամութեան առնչութեամբ: Ան նշեց, որ Հայաստանի նախագահին հետ քննարկուած են ընդլայնուող Եւրոպական Միութեան հետ Հարաւային Կովկասի երկիրներու աւելի սերտ կապերու հետեւանքները: Կողմերը անդրադարձած են Վրաստանի եւ Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին:

Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտտի, նախագահ Քոշարեանի հետ հանդիպումէն ետք մամուլային ասուլիսին ընթացքին, յայտնեց, թէ քննարկուած են Հայաստան – Եւրոպական Միութիւն յարաբերութիւններու վարձագումն նպաստող միացեալ ծրագիրներ: Այս առումով, Փրոտտի կարեւոր նկատեց Հայաստանի տնտեսական վարձագումնային յարաբերութիւնները:

Իր կարգին, նախագահ Քոշարեան նշեց, որ Եւրոպական Յանձնաժողովի ղեկավարին հետ քննարկած է շրջանային հաւանական վարձագումները եւ տնտեսական կապերու վարձագումնային հնարաւորութիւնները:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, նախագահ Քոշարեան յայտնեց. «Մենք համոզուած ենք, որ շրջանային համագործակցութիւնը միայն կ'օգնէ ներկայ խնդիրներու լուծման: Այդպէս ճանի մէջ մտնելու մարտեր է: Պարու կ'ըսէ, թէ նախ լուծելու տագնապը, ապա համագործակցիւք: Այս է սկզբունքային տարբերութիւնը, եւ հոս է, որ մենք, ի տարբերութիւն Այդպէս ճանի, որեւէ սահմանափակում, նախապայմաններ չենք դնել՝ տագնապը լուծուած է, թէ ոչ»:

Եւրոպական Յանձնաժողովի ղեկավարին հետ քննարկած է շրջանային հաւանական վարձագումները եւ տնտեսական կապերու վարձագումնային հնարաւորութիւնները:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, նախագահ Քոշարեան յայտնեց. «Մենք համոզուած ենք, որ շրջանային համագործակցութիւնը միայն կ'օգնէ ներկայ խնդիրներու լուծման: Այդպէս ճանի մէջ մտնելու մարտեր է: Պարու կ'ըսէ, թէ նախ լուծելու տագնապը, ապա համագործակցիւք: Այս է սկզբունքային տարբերութիւնը, եւ հոս է, որ մենք, ի տարբերութիւն Այդպէս ճանի, որեւէ սահմանափակում, նախապայմաններ չենք դնել՝ տագնապը լուծուած է, թէ ոչ»:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, նախագահ Քոշարեան յայտնեց. «Մենք համոզուած ենք, որ շրջանային համագործակցութիւնը միայն կ'օգնէ ներկայ խնդիրներու լուծման: Այդպէս ճանի մէջ մտնելու մարտեր է: Պարու կ'ըսէ, թէ նախ լուծելու տագնապը, ապա համագործակցիւք: Այս է սկզբունքային տարբերութիւնը, եւ հոս է, որ մենք, ի տարբերութիւն Այդպէս ճանի, որեւէ սահմանափակում, նախապայմաններ չենք դնել՝ տագնապը լուծուած է, թէ ոչ»:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, նախագահ Քոշարեան յայտնեց. «Մենք համոզուած ենք, որ շրջանային համագործակցութիւնը միայն կ'օգնէ ներկայ խնդիրներու լուծման: Այդպէս ճանի մէջ մտնելու մարտեր է: Պարու կ'ըսէ, թէ նախ լուծելու տագնապը, ապա համագործակցիւք: Այս է սկզբունքային տարբերութիւնը, եւ հոս է, որ մենք, ի տարբերութիւն Այդպէս ճանի, որեւէ սահմանափակում, նախապայմաններ չենք դնել՝ տագնապը լուծուած է, թէ ոչ»:

## ԵԱՀԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներ Եուրի Մերկլիակով (Ռուսիա), Հանրի Ժաքոլէն (Ֆրանսա) եւ Ռուստիֆ Փերինա (Միացեալ Նահանգներ) երէկ հասան Հարաւային Կովկաս, հանդիպումներ ունեցնելու համար Հայաստանի եւ Այդպէս ճանի նախագահներուն հետ, երկու կողմերուն միջեւ երկխօսութիւնը վերականգնելու հեռանդրէ կարող:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամուլային քարտուղար Համլէթ Գասպարեանի համաձայն, անոնք Պաղեստին երեւան պիտի հասնին Դեկտեմբեր 8ին: Կը սպասուի, որ միջնորդները ներկայացնեն նոր գաղափարներ, ամբողջացնելու համար գոյութիւն ունեցող առաջարկները՝ բանակցութիւններու հետ, երկու կողմերու արձագանքը ընդունելի պայմաններու հասնելու համար:

Այցելութեան ընթացքին Մինսքի խմբակի նախագահները նաեւ հանդիպում պիտի ունենան Լեռնային Ղարաբաղի ղեկավարութեան հետ:

## ԱՅՍՈՐ ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԷՁ ՕՍԿԱՆԵԱՆ – ԿԻԻԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներ Վարդան Օսկանեան եւ Ապտիլլա Կիլ այսօր հանդիպում պիտի ունենան Պրիւքսէլի մէջ՝ Եւրոպայի տնտեսական Գործընկերութեան Խորհրդի նիստին ծիրէն ներս: Նախարարներու մակարկակով հայ – թրքական հանդիպումներու օրակարգի հարցերէն է երկու երկիրներու սահմանային բացումը:

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՑԱԲԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵ ԵՐԻԹՐԻՈՅ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Երեկ վախճանեցաւ Երիթրիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ պատրիարք Եազուպ Բ.: Այս տխուր առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Ս. Սրբան Ա. կաթողիկոս հրաւեր ստացաւ Եկեղեցւոյ Սինոտին կողմէ անձամբ մասնակից դառնալու վախճանեալ պատրիարքի յուղարկատրութեան, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ օր:

Երիթրիոյ Եկեղեցւոյ եպիսկոպոսական Սինոտին ուղղած իր Հայրապետական ցաւակցագիրին մէջ վեհափառ հայրապետը մեծ կորուստ մը կը նկատէ պատրիարքին մահը, վերականգնումի ու վերանորոգութեան ընթացքի մէջ գտնուող եւ իր անկախութիւնը նոր ստացած Երիթրիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ համար: Այս տխուր առիթով, վեհափառ հայրապետը իր ամբողջական պարակցութիւնը կը յայտնէ Եկեղեցւոյ հոգեւոր իշխանութեան:

Յայտնենք, որ Երիթրիոյ Եկեղեցին շուրջ հինգ տարիներ առաջ ստացաւ իր անկախութիւնը: Նախապէս մաս կը կապուէր Եթովպիոյ Եկեղեցւոյ եւ անցնող 2003 Սեպտեմբերին անդամ դարձաւ Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդին: Վեհափառ հայրապետը անցեալ տարի հրաւիրուած էր Երիթրիոյ Ուղղափառ Եկեղեցիին պաշտօնական այցելութիւն տալու, որ յառաջիկային տեղի պիտի ունենայ:

## ԱՄՐ ՄՈՒՍՍ ԱՅՅԵԼԵՅ ՊԱՍՊՏԱ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտ երէկ Պասպոտայի մէջ ընդունեց Սրբաբարկան Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայ, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ պաշտօնակազմի գաղտնի պահպանման ընթացքը: Ենթադրեցաւ Պէրլուրի վեհաժողովին որոշում խաղաղութեան իրաւանական նախաձեռնութեան գործադրութեան անհրաժեշտութիւնը:

Նախագահ Լախուտ առաջարկեց նաեւ Սրբաբարկան Լիկայի մէջ կարգ մը փոփոխութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը:

Հանդիպումէն ետք Մուսայ շեշտեց, որ շրջանը կը գտնուի գաղտնի պահպանման մէջ եւ կարիքը ունի առաւելագոյն պաշտպանութեան, ինչպէս նաեւ համաարարական միացեալ կեցուածքի, որ կը վերադարձնէ արարական աշխարհին իր հանգամանքն ու իրեն հանդէպ յարգանքը:

Մուսայ նկատել տուաւ, որ խաղաղութիւնը տակաւին չէ գոյացած Բարախի կառավարութեան մեթոդական քաղաքականութեան պատճառով:

Մուսայ ընդգծեց, որ Լիբանան եւ արաբական գրեթէ բոլոր երկիրները կը մերժեն պաղեստինցի գաղթականներու բնակեցումը իրենց գտնուած երկիրներուն մէջ:

Նշեց նաեւ, որ նախագահ Լախուտ երէկ ընդունեց նաեւ Մարոնիներու Լիկայի մէջ պատուիրակութիւնը, նորոգելու նախագահ նախկին նախարար Միշէլ Էտտէի գլխաւորութեամբ:

Նախագահ Լախուտ շեշտեց, որ Մարոնիներ լիկայի առաքելութիւնը պէտք է ըլլայ իրականացրելու սպառնալից իրադրութիւնները, անբախտելի իրաւանական պայմաններու նախադրմանը, ինչպէս նաեւ դառնալով բոլոր Լիբանանի իրական ուժի միասնական խաղաղութեան օգտին:

Նախագահ Լախուտ շեշտեց, որ Մարոնիներ լիկայի առաքելութիւնը պէտք է ըլլայ իրականացրելու սպառնալից իրադրութիւնները, անբախտելի իրաւանական պայմաններու նախադրմանը, ինչպէս նաեւ դառնալով բոլոր Լիբանանի իրական ուժի միասնական խաղաղութեան օգտին:

## ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ՍԵՆՈՐԱ ԵՒ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՆ ԻՐԵՆՅ ԳՐԱԻՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆԸ

Ելեւմուտքի նախարար Ֆուատ Սինիրայի եւ քարտուղարի նախարար Շահէ Պարսումեանի թղթածրարաններու վերաբարձման հարցով Սինիրայ եւ Պարսումեան խորհրդարանին ներկայացուցին իրենց գրաւոր պաշտպանողականը:

Խորհրդարանը յառաջիկայ շաբաթ իր լիագումար նիստին ընթացքին պիտի քննարկէ այս հարցը:

Նշենք, որ շաբաթակազմի նախկին նախարար Պարսումեան գրաւոր իր պաշտպանողական ներկայացուցելէ ետք խորհրդարանին, դիտել տուած էր, որ ահաւաստիկ հինգ տարի ետք այսօր առիթ տրուած է իրեն պաշտպանելու ինքզինք, ինչպէս նաեւ իր եւ իր ընտանիքին արժանապատուութիւնը:

## «ՅԵՆԻՍԻԱ» ՊԱՆՈՒԿԻՆ ՄԷՋ ԲԱՅՈՒՄ ԱՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱԶԳՎՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լախուտի հովանաւորութեամբ, երէկ «Յենիսիա» պանդոկին մէջ բացուած կատարուեցաւ «Արաբական ապագայի դիմագրաւում» թեմայով խորհրդաժողովին, որուն ներկայ գտնուեցան նախագահ Լախուտ, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, վարչապետ Ռաֆիք Հարիրի, Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայ, Լոնտոնի մէջ Սէնտական Արաբիոյ դեսպան Թիթի Ֆայալ, նախարարներ, երեսփոխաններ, ինչպէս նաեւ բարձրաստիճան ալ անձնաւորութիւններ:

Խօսք առաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, որ յայտնեց, թէ արաբական պառակտումը եւ իշխանութիւններու տկարացումը տեղ - տեղ թուլատրեցին, որ արաբական աշխարհին ուղղուին պատերազմի սպառնալիքներ, ինչպէս նաեւ մտերիկեան Բոնկրասին կողմէ որդեգրուին արաբական աշխարհի դէմ պատժական միջոցառումները եւ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը:

Պըրրի ընդգծեց նաեւ, որ արաբական որոշումը ինքն է, որ կորսնցուց Պաղեստինն ու Իրաքը, որովհետեւ առիթ չտուեալ ժողովրդավարութեան:

Խօսք առաւ նաեւ Ամր Մուսայ, որ իր խօսքին մէջ շեշտեց, թէ արաբական աշխարհը կը մօտենայ ձախողութեան առեւտրի քան յաղթողութեան, եւ հարկ է, որ ապագայի լուրջ հեռանկար մը գծուի:

Ֆայալ ըսաւ, որ արաբներն ու իսլամները պէտք է սրբազրեն իրենց սիրտերը եւ իրենք զիրենք դուրս բերեն ներկայ սուղապանութիւնը:

Նշենք, որ խորհրդաժողովի բացման արարողութեան նախաձեռնողը իրաքցի Մուսայ իշխանութեան երեք պետերուն յանձնեց յուշանուէրներ:

## ԵԿԵՂԵՑ ԹՈՒՐԲԸ ԶԻ ԿՐՆԱՐ ՀՐԱԺԱՐԻԼ ԻՐ ԲԱՐՔԵՐԷՆ

Թէեւ այս ակնարկը լրագրական ընդունւած կարգերուն համաձայն պէտք է սկզբունքով լոյս տեսնէ մարպակաւ էջով, սակայն գիտակցաբար կու տանք այս սինակով, որովհետեւ նոյնիսկ եթէ անոր շարժառիթը մարպակաւ իրադարձութիւն մըն է, ապա անոր խորքը լրիւ քաղաքական է:

Խօսքը կը վերաբերի ֆուլթայի «Զէմփիրնիկ Լիկ» մրցաշարի ծիրէն ներս կատարուած Կալաթասարայ - Եուվենթուս մրցումին: Թրքական խումբը Եու. Է. Էֆ. Ա. ի յատուկ որոշումով իր մրցումը Պոլիս չկատարեց ահաբեկչական վերջին արարքներուն մտահոգութեամբ: Մրցումը փոխադրուեցաւ Տորթոնուտ, Գերմանիա: Սակայն փաստօրէն ոչինչ փոխուեցաւ կացութեան, որովհետեւ Տորթոնուտի դաշտը, որ կ'ընդգրկէ 65 հազար համակիր, ամբողջութեամբ լեցւած էր թուրք համակիրներով: Փակագիծ մը բանաւք եւ յիշեցնենք, որ Գերմանիոյ տարածքին կ'ապրին շուրջ հինգ միլիոն թուրքեր...

Մտահոգիչը, սակայն, մրցումին աւարտին պարպուած պատկերն է: Հակառակ իրենց յաղթանակին (2-0), թուրք համակիրները Տորթոնուտի դաշտը քարուքանդ ըրին քառն ամբողջական առումով: Աւելի 'ն: Անոնք խոշտանգեցին նաեւ դաշտին ապահովութեան հսկող անդամները եւ խուժեցին դաշտ' տօնախմբելու իրենց յաղթանակը: Ասիկա տօնախմբելու թրքական յատուկ ուժ է: Հապա՞ եթէ պարտուէին: Ամբողջ քաղաքը պիտի աւերէին...

Եւրոպական բանաւոր թէ գրաւոր մամուլը ընդվզումով ու միաժամանակ կարմանքով անդրադարձաւ այս կացութեան, լայն տեղ տրամադրելով անոր՝ իր տարբեր լրատուութեանց մէջ: Բայց ինչո՞ւ կը կարմանան անոնք: Տակաւին չստրվեցա՞ն, թէ թուրքը չի՞ կրնար, աւելի ճիշդ՝ չ'ուզեր հրաժարի իր բարքերէն: Այո՛, բարքերէն: Որովհետեւ քարքարոսութիւնը մաս կը կապուէ անոնց բարքերուն: Ի վերջոյ, առաջին անգամ չէ, որ թուրքերը նման էլոյթներ կ'ունենան: 2000ին, Պոլսոյ մէջ Կալաթասարայի մրցումը Լիծի դէմ կարելի՞ է մոռնալ, ուր երկու անգլիացի համակիրներ կոհ գացին: Պէտք կա՞ շարունակելու այս իմաստով երկա՞ր ու «հարուստ» շարքը, թրքական կենսափոքրը...

Յամենայնդէպս, վստահ պէտք է ըլլան Եւրոպացիք, որ Տորթոնուտի դէպքը վերջինը պիտի չըլլայ, դժբախտաբար: Թուրքը պիտի շարունակէ իր միեւնոյն ընթացքը: Ի վերջոյ եւ պայն էնթեկրէ ընելու բոլոր փորձերը: Թուրքը էնթեկրէ չ'ըլլար, այլ՝ կը փորձէ իր շրջապատը էնթեկրէ ընելու...

Ահա թէ ինչո՞ւ Եւրոպացիք այլ տուեալներու կողքին նա՛եւ այս երեւոյթը պէտք է նկատի ունենան, նախքան իրենց վերջնական պատասխանը տալու Եւրոպական Սինոտեան Թուրքիոյ անդամակցութեան ջանքերուն գծով:

ՀԻՍՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

## ՈՒՇԱՎՐՈՒԹԻՒՆ

Այսօր՝ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003, Հայաստանի «Վ1» պատկերասփիւռի կայանը, Պէյրութի ժամով՝ 22:00ի լուրերն ենք պիտի սփռն յայտագիր մը, նուիրուած՝ Ս. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԱՆԻ:

## ՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԱԿ

Ընդհանուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ լիբանոնեան իրաւաբանութեան վկայակամը կողմ ուսանող սպաներ զինուորագրելու իր կարիքը:

Դիմողը պէտք է լրացնէ հետեւեալ պայմանները. Ա.- Պէտք է լիբանոնցի ըլլայ աւելի քան 10 տարիներ ի վեր:

Բ.- Պէտք է ըլլայ ամուրի, այրի կամ ամուսնալուծուած՝ առանց զաւակներու:

Գ.- Պէտք է տիրացած ըլլայ լիբանոնեան Բ. պաշտպանութեան կամ անոր համապատասխան վկայակամի մը:

Դ.- Պէտք է տիրացած ըլլայ լիբանոնեան իրաւաբանութեան վկայակամի՝ ուսումնառութեան տարիներու ընդհանուր միջինը 12/20 եւ վեր ճիշդով:

Ե.- Պէտք է կատարած կամ կատարելիք ըլլայ իր զինուորական պարտադիր ծառայութիւնը: Կրճան դիմել նաեւ մէկ հատիկները եւ նահատակի զաւակ եղողները:

Զ.- Դիմում ներկայացուցած թուակամին պէտք է դիմողն տարիքը 26ը անցած չըլլայ քաղաքային անձերու պարագային, իսկ իսկական ծառայութեան մէջ գտնուող զինուորակամներուն պարագային՝ 28 տարիքը:

Յաւելեալ մանրամասնութեանց համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, Պուրճ Համուտ, «Շաղոյեան» Կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01 / 259881:

✠ ՀԱՆԳԻՍ ✠  
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԱՆԻ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կիլիկեան Ա. Աթոռոյ Միաբանութիւնը խոր վշտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին՝

Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔ. ԱՇՃԱՆԻ  
(1941-2003)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Դեկտեմբերին, Նիւ Եորքի մէջ:

Հոգեւոր սրբազանին վերջին օծման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին, Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ: Ապա սրբազանին մարմինը պիտի փոխադրուի Անթիլիաս:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 8 Դեկտեմբերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, առաւօտեան ժամը 11:00ին, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Կիլիկեան Ուխտի Միաբանութեան դամբարանին մէջ, Անթիլիասի Մայրավանքէն ներս:

ՄԱՆՕԹ. - Թաղման կարգէն ետք վեհափառ հայրապետը ցաւակցութիւններ պիտի ընդունի վեհաբանի դահլիճին մէջ:

✠ ՀԱՆԳԻՍ ✠  
Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱԶԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կիլիկեան Ա. Աթոռոյ Միաբանութիւնը խոր վշտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին եւ Յունաստանի Հայոց թեմի առաջնորդին՝

Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱԶԵԱՆԻ  
(1930-2003)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Նոյեմբերին, Յունաստանի մէջ:

Հոգեւոր սրբազանին վերջին օծման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 5 Դեկտեմբերին, Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Աթէնքի Ազգ. գերեզմանատան մէջ:

✠ ՀԱՆԳԻՍ ✠  
Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔ. ԱՇՃԱՆԻ  
(ՕՃԵԱՆ՝ 1941ԻՆ)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 2 Դեկտեմբերին, Նիւ Եորքի մէջ:

Հոգեւոր սրբազանին վերջին օծման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2003ին, Նիւ Եորքի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ, ապա սրբազանին մարմինը պիտի փոխադրուի Անթիլիաս:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 8 Դեկտեմբերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, առաւօտեան ժամը 11:00ին, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Կիլիկեան Ուխտի Միաբանութեան դամբարանին մէջ, Անթիլիասի Մայրավանքէն ներս:

- Ներկայս ընդունելի իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին վախճանեալից եղբոր՝ Յովհաննէս Աշեանի ընկալանք, Ժէյ Ել Տիպ, «Հաֆիզ Ալլու ժառանգ» շէնք, Բ. յարկ, "Jardin de Chine" ի կից, Երկուշաբթի 8. Երեքշաբթի 9 եւ Չորեքշաբթի 10 Դեկտեմբերին:

✠ ՀԱՆԳԻՍ ✠  
Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱԶԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Կիլիկեան Ա. Աթոռոյ Միաբանութիւնը խոր վշտով կը գուժեն իրենց սիրեցեալ միաբանին եւ Յունաստանի Հայոց թեմի առաջնորդին՝

Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱԶԵԱՆԻ  
(1930-2003)

անակնկալ վախճանումը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Նոյեմբերին, Յունաստանի մէջ:

Հոգեւոր սրբազանին վերջին օծման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 5 Դեկտեմբերին, Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ, ապա սրբազանին մարմինը պիտի ամփոփուի Աթէնքի Ազգ. գերեզմանատան մէջ:

✠ ՀԱՆԳԻՍ ✠  
Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊՍ. ԱՅՎԱԶԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Տէր եւ տիկին Արթուր Կիւլպէնկ եւ զաւակուհի Տէր եւ տիկին Գէորգ Տէր Յակոբեան եւ զաւակուհի Կիւլպէնկ Սուրէն Կիւլպէնկ Կիւլպէնկ ընտանիք Հատմաս ընտանիք Թոմաս ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր եւ հարազատին՝

ՄԱՀԱԶԴ  
Տէր եւ տիկին Արթուր Կիւլպէնկ եւ զաւակուհի Տէր եւ տիկին Գէորգ Տէր Յակոբեան եւ զաւակուհի Կիւլպէնկ Սուրէն Կիւլպէնկ Կիւլպէնկ ընտանիք Հատմաս ընտանիք Թոմաս ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր եւ հարազատին՝

ՍՈՒՐԵՆ ԿԻԻԼՊԵՆԿ ԿԻԻԼՊԵՆԿԻ  
մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Նոյեմբերին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 4 Դեկտեմբեր, կէսօրուան ժամը 12:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրպէս հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Չըպպէթի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունելի իբրեւ մահագր:

● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Բաղուցեալի ընկալանք, Նաքար, 2 «Պլու Նորիզոն» շէնք, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Դեկտեմբերին:

# ԲԱՅՑ ԴԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ԾԱՂԿԻ ԿԻԼԿԵԱՆ Ս. ԱԹՈՌԻՆ ՊՂՏԱԾՈՒ ԾԱՌԸ... (ՍԱՇԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆՆԵՐՈՒ ԿԱԽՃԱՆՍԱՆ ԱՌԻԹՈՎ)

Վերջին քանի մը օրերուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը վիշտի ու սուգի վարագոյրով պատուեցաւ, երբ վեհափառ հայրապետ Ս. Ս. Ս. Արամ Ա. կաթողիկոս, միաբանութեան հետ միասին, իրերայնորդ երկու առիթներով գուժեց Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի նուիրեալ երկու միաբաններէն՝ Տ. Սահակ Ս. արք. Արամեանի եւ Տ. Մեսրոպ Ս. արք. Աշտնիկի անժամանակ կորուստները: Յունահայոց թեմի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Յունաստանի մէջ, իսկ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի նախկին առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Նիւ Եորքի մէջ իրենց հոգին աւանդեցին անակնկալ կերպով, խոր սուգի մատուցելով հայ եկեղեցին, յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր միաբանութեամբ, ժողովրդական մարմիններով ու հաւատացեալ ժողովուրդով:

Կիլիկեան Ուխտի երէց սերունդին պատկանող այս զոյգ ներկայացուցիչները անցնող տասնամեակներուն իրենց ծառայութեան լուծան նետեցին մեր եկեղեցւոյ, ազգի ու հայրենիքի գանձանակին մէջ: Վաստակ, որ իր տարողութեամբ ու նուիրումի որակով անգնահատելի պիտի մնայ հայ եկեղեցւոյ սպասուողներու պատմութեան տոմարներուն մէջ:

Արդարեւ, «մինչեւ վերջին շունչ» ծառայութեան դաշտին վրայ գործող այս երկու մշակները, թեմական կազմակերպ գործունէութեամբ ազգային եկեղեցական կեանքէն ներս իրենց կարեւոր ներդրումը կատարեցին: Հոգեւոր, կրթական, գաստիւնարակազմական, մշակութային ու ընկերային զանազան աշխատանքներով ու նախաձեռնութիւններով, հոգեւոր սրբազանները սատար հանդիսացան մեր ժողովուրդին կողմէ իրենց վստահուած թեմերուն վերելքին ու բարգաւաճման:

Շուրջ կէս դար միանուէր կերպով վարելով Յունաստանի Հայոց թեմի առաջնորդի պաշտօնը, Սահակ արքեպոս մնաց պատնէշի վրայ: Ազգային ընդհանուր ժողովներու եւ Կրօնական թէ Ազգային Կեդրոնական Վարչութեան խառն ժողովներու խիզախ բեմբասացը, մնաց շատազով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան անկախութեան եւ Սփիւռքի տարածքին անոր ուրոյն գործունէութեան: Երջանկայիշատակ Տ. Տ. Ջարեք Ա. անմահանուն հայրապետի սուրբ աջէն ստանալով սրբայայտ Միւռնիի օժուժը իր ճակատին, տակաւին 27ամեայ Սահակ եպիսկոպոս իր կեանքը կապեց Յունահայոց թեմին: Անթիլիասի դէմ շղթայագրեծուած արուեստական տագնապի դժուարին օրերուն, դարաւոր Ս. Աթոռի գոյատեւման դրօշակակալ իր բեւեւ, ամրապնդեց հաւատացեալ ժողովուրդին հաւատքը հանդէպ այս Ս. Աթոռին, իր անձին օրինակով գործնական փաստը հանդիսանալով Կիլիկեան Ս. Աթոռի ծառայական առաքելութեան: Երաժշտական նրբագոյն լարերով օժտուած հոգի մը, որուն արտացոլեց իր հեզգահամբող դէմքը՝ մաքուր նկարագիրին ու բարոյական անբծութեան շօշափելի արտայայտութիւնը:

Այս առիթով վեհափառ հայրապետը Յունաստանի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդին, Ազգ. Իշխանութեան անդամներուն ու սգակիր ժողովուրդին ուղղած իր հայրապետական ցաւակցագիրին մէջ կ'ըսէ. «Սահակ արքեպոս իր հոգեւոր սպասուորութիւնը ըմբռնեց որպէս նուիրում ու յանձնառութիւն: Եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաւատարիմ միաբանը, բառին ամէնէն վաւերական հասկացողութեամբ: Ծառայեց առանց ակնկալութեան, առանց փառքի ու հանգամանքի հետամուտ ըլլալու: Եղաւ պարզութեան, համեստութեան ու անկեղծութեան տիպար օրինակ: Այսինքն 50 տարիներ սրբազան իր այս արժանիքները նուիրեալ ծառայութեան ճամբով ի սպաս դրաւ ընդհանրապէս հայ եկեղեցւոյ ու մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հաւատքի առաքելութեան՝ թէ՛ Անթիլիասի եւ թէ՛ Յունաստանի Հայոց թեմէն ներս»:

Իր վախճանումէն քանի մը օրեր ետք, անգամ մը եւս քամին հարուածեց Կիլիկեան Ս. Աթոռի պտղատու ծառը, երբ Մեսրոպ արք. Աշտնիկի Տէր հանգեաւ սրտէն նետահար եղնիկի մը պէս: Արագավազ գործունէութեամբ յատկանշուող ու բազմաճիւղ աշխատանք միաժամանակ ծաւալող Աստուծոյ այս պաշտօնեան եւս, մինչեւ վերջին իր շունչը, հոգեւորական կեանքը իմաստաւորեց ծառայութեան, թեմական աշխատանքներու թէ անհատական նախաձեռնութեանց ճամբով: 20 երկար տարիներ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան շրջանի եւ Քանադայի իր առաջնորդութեան օրերուն, թեմը ապրեցաւ հոգեւոր- մշակութային կեանքի ծաղկումի ու վերելքի շրջան մը, որուն յաւազոյն արտայայտութիւնները եղան նոր համայնքներու կազմութիւնը, եկեղեցիներու կառուցումը, հայկական վարժարաններու ստեղծումը,

հրատարակչական աշխատանքը եւ մշակութային ձեռնարկները: Ստեղծագործ այս միտքը չբաւականացաւ սակայն սահմանափակ առաքելութեամբ եւ յետ առաջնորդութեան տարիներուն, ընդլայնեց զայն հայրենի մեր ժողովուրդի կարիքներուն դրժնապէս աջակցելով: Առաքելութեան անդին առաքելութեան փնտրուէր տարաւ գինք հոն, ուր ազգին կանչը կը լսուէր, տխուր թէ ուրախ ազգականներով:

Վեհափառ հայրապետը դարձեալ, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ սրբազանին ու թեմի հաւատացեալ ժողովուրդին ուղղելով իր հայրապետական ցաւակցագիրը, կ'ըսէ. «Մասնաւորութիւնը անսակարկ, անանձնական ու ամբողջական ծառայութիւնը Մեսրոպ սրբազանին համար դարձաւ իր կեանքին դաւանանքը, իր առաքելութեան ուղեգիրը, իր գոյութեան նպատակը: Մեսրոպ սրբազան դարձաւ հոմանիշ ծառայութեան: Մասնաւորութիւնը իրեն համար հանգամանքի բերումով կտակ պարտաւորութիւն մը չէր զգաւ՝ որոշ ծրագիրներով ու որոշ ժամանակաշրջանի մէջ պարփակուած, այլ եղաւ ամէնօրեայ տագնապ, ապրում, ձգտում, ժամ ու հանգիստ չճանչցող մնայուն եւ ուժեղ անձնական ընթացք»:

Կիլիկեան Ս. Աթոռի վերջին շրջանի պատմութեան մէջ Սահակ եւ Մեսրոպ սրբազաններու վաստակը, Անթիլիասէն առած իրենց ծառայական ոգին արդիւնաւորութեամբ ու իրագործումներով անթառամ պիտի մնայ Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի կապուած ժողովուրդի կեանքին մէջ:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹԾԵԱՆ

**ՀԱՅ ՅԵՂԱԺՈՒԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 113ԱՄԵԱԿ**

Կը բանախօսեն՝ **ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՍ ԸՆԿ. ԱԼՊԵՐԹ ԱՃԵՄԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 11 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ:

**Բարձր հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. ՍՐԱՄ Ա. ՎԵՂԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՍԻ ՏԱՆԸ ԿԻԼԿԻՈՅ**

ԸԱՍԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ Կը կազմակերպէ յիշատակի ցուցահանդէս

**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԷԹԵԱՆԻ**

20րդ դարու հայ մտաւորականներու դիմանկարներուն

Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահէն ներս: Բացումը տեղի կ'ունենայ այսօր՝ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003ին, երեկոյեան ժամը 7:00ին: Ցուցահանդէսը բաց կը մնայ 6էն 9 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 6:00:

**ՀՐԱԲԵՐ**

# 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ 15ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԱՍԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ



7 Դեկտեմբեր 1988ին Հայաստանն ու ամբողջ հայութիւնը ցնցած աղէտալի երկրաշարժին 15րդ տարեդարձին առիթով, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատունը եւ Հայաստանի Համալսարանն եւրո Շրջանաւարտներու Միութիւնը կազմակերպեցին դասական երաժշտութեան երեւոյթ մը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 4 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 8:00ին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի «Էսեմպլի <Ն>» սրահին մէջ՝ ներկայութեամբ պաշտօնական անձնաւորու-

## «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45 «Աստղեր»
- 9:40 «Օրուան տոմար»
- 10:45 «Ի՞նչպէս կը տօնէք»՝ այսօրուան հիւրն է Երեսփոխան Փիեռ ժեմայէլ
- 3:00 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 3:10 Hit Parade. Արաբերէն յայտագիր
- 4:45 «Բարի երեկոյ Վաճառ Զայնէն»՝ ուղղակի ձայնագրում՝ այլազան եւ հետաքրքրական նիւթեր, երգեր, հարցազրոյց եւ այլն: Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան հիմնադրութեան 75ամեակին առիթով. յայտագիրն իր հիւրերն են Սիգրան Ժինգալեան եւ Յակոբ Եսփուճեան
- 6:50 «Օրուան տոմար» (կրկնութիւն)
- 7:05 «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)
- 7:15 «Ուազմիկ»՝ խաղ- մրցանք. ուղղակի ձայնագրում

Կարելի է նշել, որ այս նուագահանդէսէն գոյացած հասոյթը ամբողջութեամբ պիտի տրամադրուի Կիւմրիի մէջ մշակութային ծրագիրներու իրականացման եւ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի միջոցով պիտի յատկացուի շրջանին երաժշտական դպրոցին:

**ԲԱՆՏԱՒՈՐՈՒԱԾ**

Տէր եւ տիկին Գրիգոր եւ Ալին Նաճարեան բախտաւորուած են մանչ գաւակով մը՝

**ԿԱՐՕ**

Հինգշաբթի, 4 Դեկտեմբեր 2003

**ԾԱԽՈՒ ԾՔԵՂ ՅԱՐԿԱԲԱԺԻՆՆԵՐ**

●Անթիլիաս - Սգիտի սկիզբ: Ըեռ. 04 523926:

# ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

4 Դեկտեմբերի լիբանանեան օրաթերթերը յուսարձակի տակ առած են նախարարաց խորհուրդի նիստը, անոր արդիւնքները եւ Լիբանանեան Համալսարանի ուսուցիչներուն կողմէ գործադրուող դասադուրը եւ բողոքի ցոյցերը:

Միջպագային եւ շրջանային իրադարձութիւններու կարգին օրաթերթերը յուսարձակի տակ առած են Պուշի Կորակցութիւնը ժընեի նախաձեռնութեան, Պաղտատի մէջ ապահովութիւն հաստատելու համար յաւելեալ Կորթերու տեղադրումը եւ Դամասկոսի մէջ Պրապիլի նախագահին հետ ունեցած հանդիպումէն ետք նախագահ Ասատի կատարած յայտարարութիւնները:

## ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՍ - ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԲՈՂՈՔԻ ԾՈՅՑ

«Քիֆահ Արապի» գրած է, թէ շինարարութեան եւ կենսոլորտի վերաբերող թղթածրարներու քննարկումը յետաձգուեցաւ: Նախարարաց խորհուրդը կը փորձէ միջին եւր մը գտնել ուսուցիչներու հարցին, իսկ անոնք վճռական են մինչեւ ծայր երթալու: «Անուար»-ի համաձայն, Լիբանանեան Համալսարանի տագնապը կը շարունակուի եւ ուսուցիչները կը մերժեն պետութեան կաշառքը. թերթը հարց տուած է, թէ «Մատինա» դրամատան թղթածրարին հետապնդումը արդեօք տեղ մը պիտի հասցնէ՞:

«Մաֆի»-ի հետ տուած է, թէ համալսարանի ուսուցիչներու պահանջներու քննարկումը չի կատարուի անոնց բողոքի ցոյցերը եւ դասադուրը: Վարչապետ Հարիրիի Դամասկոս այցելութեան մասին եղած հարցազրուումներուն պատասխանելով խորհրդարանի նախագահ Նեպի Պրըրի բաց է, թէ այն հանդիպում ունեցաւ նախագահ Ասատի հետ:

Ըստ «Նահար»-ի, նախագահներուն միջեւ խաղաղութիւն տիրեց եւ դասաւորումներ կը կատարուի համաձայնութեան հաստատման համար: Լիբանանեան Համալսարանի ուսուցիչները կաշառքը մերժելով կը շարունակեն իրենց բողոքը:

«Տիար»-ը հետեւ տուած է, թէ սուրիական խրատները իրենց դրական ազդեցութիւնը ունեցան նախագահներու յարաբերութեան վրայ: Հարիրի կը հաստատէ, թէ ինք կապերը չէ խլած նախագահ Լահուտի հետ, իսկ նախարարաց խորհուրդը համաձայն գտնուեցաւ ուսուցիչներու պահանջներուն մէկ մասին:

## ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՏԱԳԱՊԻ ԼՈՒԾԱՆԱ ՓՈՐՁԵՐ

«Նահար» գրած է, թէ Պուշ դարձեալ նեղ կաշառք էջ 10

**ԼԻԲԱՆԱՆԱԶ ՔԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԳԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

Լիբանանահայ Բժշկական Միութեան վարչութիւնը ձեռք կը հրաւիրէ միութեան տարեկան ընդհանուր ժողովին, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, 7 Դեկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00ին, միութեան տան մէջ:

Չեր ներկայութիւնը խիստ փափաքելի է:

**ՕՐԱԿՐԳԵՐ**

- 1.- Ընթացակարտ վարչութեան գործունէութեան նիւթաբարոյական տեղեկատուութիւն:
- 2.- Ատենապետի եւ վարչակազմներու մասնակի ընտրութիւն:
- 3.- Հիւրասիրութիւն: ԾԱՆՕԹ.- Ժամը 10:30ին, ներկայութեան թիւը պիտի համարուի մեծամասնութիւն:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ**

**ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ**

ԸԱՌԻՐՈՑ ԳԱՐԱԿԵՕՂԵԱՆ ԸԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆՈՒ ՈՒ ՏՕՐԵՆՈՒԹԻՒՆՈՒ Կը հրաւիրեն ձեռք հոգեհանգստեան պաշտօնի, հանգուցեալ բարերարներու՝ ՄԻՇՐԱՆ, ԶԱՊԷԼ, ԼԵՅԼԱ եւ ԸԱՌԻՐՈՑ ԳԱՐԱԿԵՕՂԵԱՆՆԵՐՈՒ յիշատակին:

Պիտի պատարագ եւ բարոգէ՛ ԳԵՐՁ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ (Բարեջան Առաջնորդ Բերիոյ բեմի) Կիրակի, 7 Դեկտեմբեր 2003ի առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ:

Սիրով կը հրաւիրենք բոլոր անոնք, որոնք կը փափաքին յարգել մեր բարերարներուն յիշատակը:

**ՀՈՎԱՍՏԻՐՈՒԹԵԱՄ՝ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ** (Առաջնորդ Լիբանան Հայոց Թեմի)

**ՆԵՆԱԳՅԱՆՈՒԹԵԱՄ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԵՂԱՅՐԵՐՆԵՐՈՒ**

**ԼՈՒԻՍԱԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ - ՎԱՃԱՌԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ**

Լուսաստան՝ ԼԵԻՈՆ ԹԱՇՏԵԱՆ

Հասոյթը պիտի տրամադրուի «Ազդակ»-ին

Բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «ՎՐԱՄԵՆ-Հ.Մ.Ը.» մարզաշահութային համալիրի «Արժ Թովմասեան» սրահին մէջ:

ՀՐԱԲԵՐ

Ծանօթ.- Ցուցահանդէսը պիտի շարունակուի Շաբաթ 20 եւ Կիրակի 21 Դեկտեմբեր 2003, կէսօրէ կար ժամը 4:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00



# ԸՆՅ ՂԱՏ

# ԸՆՅ ՂԱՏ

## ԱՆԱՏՈՒՄԻ ԿԱՅ ԲԵԿՈՐՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (1938 - 1950)

Աթաթուրքեան շրջանին հետ բաղդատաբար՝ այս ժամանակաշրջանին հայութիւնը պարած է քաղաքական եւ հասարակական անտանելի ճնշումի մթնոլորտի մը մէջ։

Իսմէթ Ինէօնիւ, 1943ին Համաշխարհային Բ. պատերազմի թուրքական մէջ թալանարկի աճիւնը Գերմանիային թուրքերէ բերել տալով, զայն ամփոփեց «Ազատութիւն» կողմէն ըրտնդ զրուսի վրայ թերեւ իբրեւ իր կատաղի հակահայ քաղաքականութեան խորհրդանշն (ի միջի այլոց, Իսմէթ Ինէօնիւ թալանարկի քրոջ ամուսինն էր)։ Նացիական գաղափարներով ոգեւորուած թրքական ցեղապաշտութիւնը այս շրջանին վճռականութեամբ շարունակեց իթիհատական քաղաքականութիւնը՝ հայութեան տեղահանման եւ ճուլման ուղղութեամբ։

Պետական յատուկ կարգադրութեամբ հայութեան համար ճշդուեցաւ «Վերլիք Վերկիսի քանուցու» կոչուող «հարկեր քսան տոկոսի» հարկային օրէնք մը։ Այս կապակցութեամբ, ըստ Շնորհք արք. Գալուստեանի, «...Այդ օրերուն հայերու «Վերլիք Վերկիսի» տուրքը 120 տոկոսի հասած էր, այսինքն պետութիւնը հայուն ամբողջ եկամուտը կը գանձէր, ապա անոր տան կահ-կարասիները ծախել կու տար մնացեալ 20 տոկոսը ստանալու համար...» (7)։

Հարկային այս քաղաքականութիւնը մեծապէս պատճառ դարձաւ մէկ կողմէ հայութեան արտահոսքին, իսկ միւս կողմէ՝ անոր ազգային ինքնութենէն ձեւականօրէն կամ նոյնիսկ էպպէս հրաժարումին։

Յատկանշական է, որ այդ շրջանին Անատոլուի հայութիւնը ունեցած է ծխատէր քահանաներ՝ էրտուլի, Տիգրանակերտի, Կեսարիոյ եւ էվէրէկ-Ֆէնէսիոյ մէջ (8)։

### ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (1950-1960)

Շարք մը վկայութիւններ բաւարար հիմք կը հանդիսանան եզրակացնելու, որ այս տանամետեակին Ատանա Մենտերէսի վարչապետութեան օրերուն ամբողջ թրքահայութիւնը կրցած է կարճ շունչ մը առնել գոյատեւելու համար։ Եթէ բացառենք ծայրայեղական աջ ուժերու կողմէ հրահրուած 6-7 Սեպտեմբեր 1955ի հակայոյն եւ հակահայ ամբոխային բռնարարքները, հայութիւնը այս շրջանին գտնուած է համեմատաբար բնական պայմաններու մէջ՝ իր համայնքային քայքայուած կեանքը վերակազմակերպելու առումով։ Թուրքիոյ Հայոց պատրիարք Մեսրոպ արք. Նարոյեանի վախճանումէն (1944) աւելի քան եօթը տարի ետք միայն թրքահայութեան կարեւորութիւն տրուեցաւ 1951ին նոր պատրիարք ընտրելու։

Ազգպէս ընտրուեցաւ Գարեգին արք. Խաչատուրեանը։ «Ս. Փրկիչ» ազգային հիւանդանոցի վերաշխուժացումը եւս կարելի է նկատել այս շրջանի արդիւնք։ Հիւանդանոցի նիւթական բացը ծածկելու համար կազմակերպուած ժողովրդական հանգանակութեան իր համեստ մասնակցութիւնը բերեալ նաեւ գաւառի հայութիւնը (9)։

Հետաքրքրական փաստի մը լոյսին տակ կը պարզուի, որ Կեսարիոյ մէջ տակաւին 1950 թուականին գործած է թեմական դրուածք՝ իր առաջնորդով։ «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցի արտաքին բաժինի օգնական բժիշկ վարժեան Բագին իր մասնագիտական մէկ գեկնութեամբ մէջ է միջի այլոց կը գրէ. «... Եթեթ տարեկան աղջիկ մը Կեսարիայէն, տեղի առաջնորդին յանձնարարական նամակով, ազգային հիւանդանոց ուղարկուած էր...» (10)։

### ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Այս շրջանը կարելի է նկատել Թուրքիոյ արդի պատմութեան մէջ գիտնութեան խունթայի բռնատիրութեան շրջան՝ զօրավար Կիւրսէլի գլխաւորութեամբ։ Մենտերէսի շրջանի համեմատաբար ազատ պայմաններուն յաջորդող այս շրջանին հայութիւնը աւելի դանդաղ սոսոճմանով շարունակած է Անատոլուի մէջ իր իստ կառմաննափակ կեանքը։

Երկու հազար հայ բնակչութիւն ունեցող Տիգրանակերտի (11) մէջ, եկեղեցական որոշ արարողութիւններուն եւ հարսանեական խրախմէքներուն առերթեր, աստիճանաբար դժուարացած են պարզ պարուստի կենցաղային պայմանները։ Այս իմաստով նշմարելի են թրքահայ գրող Միլտիլ Մարկոսեանի գիւղազրական երկերը՝ «Տիգրիսի ափերէն» (1999) եւ «Մեր այդ կողմերը» (1988, 1994, 1995 եւ 2001) հատորները, որոնց մէջ պատկերաւոր մանրամասնութիւններով բնութագրուած են Տիգրանակերտի հայութեան հասարակական կեանքը 60ական թուականներուն (12)։

1969ին որոշ չափով նպաստաւոր պայմաններու մէջ, Պոլսոյ պատրիարք Շնորհք արք. Գալուստեան յաղողեցաւ այցելել Կեսարիոյ, Մալաթիոյ, Տիգրանակերտի, Ալեքսանդրէթի եւ Մուսա Լեբան միակ հայաբնակ Գիւղ վագրֆի հայ համայնքներուն (13)։

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ (1970-1980)

Այս շրջանը կը յատկանշուի «Գորշ գայլերու» հակահայ արշաւանքով։ Բուն անունով «Ազգային շարժում» ծայրայեղ աջակողմեան, ցեղապաշտ այս կուսակցութիւնը, Ալիարսլան թուրքէջի գլխաւորութեամբ, 1969 թուականէ հանդիսացած է փանթուրանիզմի ամենէն հուժկու բազուկը՝ Թուրքիոյ ներքին եւ արտաքին քաղաքականութեան զաշտերը ամէն տեսակի ընդդիմութենէ ու հակառակորդէ մաքրելու գործին մէջ։ Կէս գիտնութեան այս կառոյցը այդ շրջանին բուն գործունէութիւն ծաւալեց ինչպէս թուրք եւ քիւրտ այլախոհ տարրերու, այնպէս այ թրքահայութեան դէմ։

Յատկապէս հայ ազատագրական շարժման նոր գինեալ պայքարի ժամանակաշրջանին «Գորշ գայլեր»ու կիրարկած թրքացման քարոզարշաւներու սպառնալիքին ներքեւ թրքահայութիւնը ստիպուած ինքն իրեն կը ներկայացնէր իբրեւ «քրիստոնեայ թուրք»՝ հայկական ծագումն ու պատկանելիութիւնը քաղաքական յանցանք նկատելով... Թերեւս թրքական պատկանելիութեան TIS (Turk-Islam-Sunni) բանաձեւի յորինումն ու տարածումը կարելի է այս շրջանի արդիւնքը նկատել։

Շնորհք պատրիարքի տուեալներով, այդ ժամանակ իսլամացած հայութեան քանակը Անատոլուի մէջ կը հասնէր մինչեւ մէկ միլիոնի, որոնց կարեւոր մէկ մասը կը գիտակցէր իր հայկական արմատներուն։ 1980ին երուսաղէմի մէջ իր բանախօսութեան ընթացքին Շնորհք պատրիարքը հետեւեալը կ'ըսէ գաւառահայութեան մասին. «...Գաւառի մէջ նոյնիսկ մինչեւ մէկ միլիոն հայեր ունինք։ Ձեզ կը ներկայացնեմ գաւառահայութեան չորս խաւերը, այնպէս՝ ինչպէս տեսած եմ. «Ա. - Հայեր, որոնք գիտակցաբար եւ կամաւոր կերպով իսլամացած են, իսլամացած են հայութենէն եւ կ'ապրին թուրքերու մէջ։ Անոնք են, որ թիւով մինչեւ միլիոնի կը հասնին։

«Բ. - Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացած են եւ քրտական աշխրջթական ձեւերով կ'ապրին մեկուսի ու չեն խառնուիր։ Խնուսի շրջանին մէջ հարիւր ընտանիքներ կան այնպիսիներէն, որոնք գիտեն, թէ Հայ են, գիտակցաբար իրարու մէջ կ'ամուսնանան եւ կը փոփաքին վերադառնալ իրենց պապերու կրօնին, եթէ իրենց պայմանները ներեն։

«Գ. - Կամայ թէ ակամայ իսլամացած հայեր, որոնք իրենց հայկական զգացումը պահած են եւ Պոլիս հաստատուելուն պէս, դատարանի միջոցով, իրենց անձնաթուղթի վրայ «իսլամ» գրութեան «էրմէնի»ով կը փոխարինեն։ Կարելի չէ եղած Անատոլուի մէջ այս դիւանակալական սխալը սրբագրել։ Թուրք պաշտօնեան անպայման «իսլամ» կը գրէ անձնաթուղթի այն մասին մէջ, որ կրօնի համար յատկացուած է։

«Դ. - Բուն գաւառահայերը, որոնք ի պատու իրենց, հակառակ բոլոր զգայի եւ անզգայի դժուարութիւններուն՝ Հայ մնացած են, եւ որոնցմէ այսօր կը բաղկանայ Պոլսոյ հայութեան մեծագոյն մասը։ «...Մալաթիա հայեր կան, որոնք վիճակ լաւ է, նոյնիսկ ունենոր են։ Էլյազիկ հայեր կան եւ եկեղեցի ունին։ Տիգրանակերտ հայեր կան, իսկ լսածիս համեմատ, Սասնոյ լեռներուն վրայ ալ ցրուած հայեր կան, որոնց մասին ժամանակին ձեռքը անցաւ 35 դիւղերու անուանացակ մը...» (15)։

1. «Ալիք». թիւ 12562, 18 Դեկտ. 1980, Թեհրան։
2. «Հայրենիք Տարեգիրք». 1945, Պոսթըմ, էջ 263։
3. «Սուրբ Փրկիչ». Դ. տարի, թիւ 45. Խալիս 1953, Պոլիս, էջ 28, եւ թիւ 46, Յունիս 1953, Պոլիս, էջ 27։
4. Պոլսոյ «Սուրբ Փրկիչ» ազգային հիւանդանոցի նոյնաանուն պաշտօնաթերթի վերոյիշեալ երկու համարներու նոյնաանուն տարբերակներու սիւնակներուն մէջ, Է շարք այլոց, գրուած է. «Մարտի ընթացքին ընդունուած նուրբներ... Կեսարիայէն Տեր Հայկազունի ձեռքով 98 քիլո ձուար...», «Ապրիլի ընթացքին ընդունուած նուրբներ... Կեսարիոյ քահանայիճ ձեռքով Փիլիպոս Արզումանեանէ 80 քիլո ձուար... 10ական լիւս նուրբներ են. Տիգրանուի Նուշատուրեան, Վոսմշապուր Ֆրանքիլի եւ Տիգրան Ատրիսէ Ֆրանքիլի, Դուկտ. Ա. Լոթիկեանի ձեռքով՝ Ջատիկի առաւօտեան Անգարայի մէջ հաւաքուած պակի հասոյթը...»։
5. «Սուրբ Փրկիչ», Ա. տարի, թիւ 9, Մայիս 1950, Պոլիս, էջ 20։
6. «Հայրենիք Ամսագիր», ԽԱ, տարի, թիւ 4, Ապրիլ 1963, Պոսթըմ, էջ 80։ «Թուրքիա-Տիգրանակերտի հայեր-Պոլսոյ պատրիարքարանէն Տիգրանակերտ ուղարկուած Տեր Օւարթ Պալմեան կը շարունակէ տալ իր տպատրոթիւնները եւ պատկերացնել մասնաւորաբար այն ոգին, որ տեսած է Տիգրանակերտի մէջ սնացած երկու հազարի սկիզբում»։
7. «Անոնք ընդհանրապէս պահած են իրենց հիւ, աւանդական սովորութիւնները։ Օրինակ՝ նախ տղամարդիկ կը ճաշեն, ապա կ'ինքնը՝ գետինը լայն պիտոց փռելով։ «Ազգային մասնաւոր կրթութիւն ստանալու հնարաւորութեան գոյութիւնը, այդ դժբախտները կը գիտակցին միայն, թէ հայ են, եւ սակայն կարօտ»՝ ազգային եւ կրօնական կեանքի»։
8. «Նոր Մարմարա», 21 Նոյեմբեր, 2001, Պոլիս։
9. «Հետուսագրոյց Մկրտիչ Մարկոսեանի հետ»... Մարկոսեանը շատ լաջող համայնապատկեր մը ներկայացուց Տիգրանակերտի հայերու կեանքին։ «Հայերը միայն արեւմտաւոր էին, որովհետեւ ընելու այլ գործ չէր մնացած։ Նախ իրենց հողամասերը կորսնցուցած էին, յետոյ պաշտօնեալ կամ զինուորական էլիւ կրնար դառնալ...»։
10. «Ռաֆֆի տարեգիրք», Բ. Տարի, 1970, Թեհրան, էջ 511։
11. «Հայրենիք Ամսագիր», ԼԹ, տարի, թիւ 4, Ապրիլ 1961, Պոսթըմ, էջ 80։
12. Պոլսոյ «Մարմարա» թերթի աշխատակից Կ. Մուրատեանը, որ վերջերս շրջապայած է Անատոլուի հայաբնակ վայրերը, մօտ 250 հազար կը հաշուէ մեր հայրենակիցներուն թիւը՝ «հիմնուելով շարք մը տուեալներու վրայ»։ Յօդուածագիրը չի ուշեր այդ տուեալները, սակայն Անատոլուի բազմաթիւ քաղաքներու հայ բնակիչներու մասին կու տայ հետաքրքրական տեղեկութիւններ։ «Ընդհանուր երեւոյթը այն է, որ մեր այդ ցրուած հայրենակիցները շատ քիչ տեղեր միայն եկեղեցի ունին, իսկ հայկական դպրոց՝ ոչ մէկ տեղ։
13. «Հետեւաբար այստեղ կապուած մանք դատապարտուած են կորսնցնելու իրենց լեզուն եւ ազգային գիտակցութիւնը...»։
14. «Ալիք», թիւ 12562, 18 Դեկտ. 1980, Թեհրան։

### Կ. Խ.

«Դրօշակ»

(Շար. 2)

## ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԳ

## ՃԱՆԱԶՈՒՄՆԵՐ՝ ՔԱՆԱՏԱՅԻ ՄԷՉ

## - ԶԱՆԱՏԱՅԻ ԲԱԶՄԱՍԶԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԿԸ ՃԱՆՉԱՆԱՅ ԸՆՅԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ

Քանատայի Բազմաշակութային խորհուրդի բարձրագոյն մարմինը՝ Նախագահներու Խորհուրդը, 29 Նոյեմբերին թորոնթոյի մէջ տեղի ունեցած իր կիսամեայ ժողովին ընթացքին, իր օրակարգին վրայ ունենալով Հայկական Յեղասպանութեան հարցը, երկար խորհրդակցութենէ ետք որդեգրեց բանաձեւ մը, որ կը ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը։ Բանաձեւը նաեւ կը պահանջէ Քանատայի կառավարութենէն, որ ընդառաջէ Մերակոյտի 13 Յունիս 2002ի բանաձեւէն բխող առաջարկին եւ ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը։

Քանատայի Հայ ազգային դաշնակցութեան նախագահ Ընկ. Արիս Պապիկեան, Բազմաշակութային խորհուրդի Նախագահներու Խորհուրդին պաշտօնապէս ներկայացող Հայկական Յեղասպանութեան ճանաչումի բանաձեւը, որ երկրորդուեցաւ Քանատայի փորթուգալեան Ազգային Բանկէթի նախագահ Փիթեր Ֆերերայի կողմէ եւ վաւերացեցաւ Ջախիլիի մեծամասնութեամբ։ Միակ դէմ քուէարկող կազմակերպութիւնը եղաւ Քանատայի թրքական կազմակերպութիւններու համախմբման նախագահը։ Արդարեւ, թուրք կազմակերպութիւններու համախմբման նախագահը փորձեց ճանաչման պատճառբանութիւններ ստեղծել՝ խափանելու համար Յեղասպանութեան ճանաչումը բարձրագոյն մարմինին կողմէ։

Ընկերներ Արիս Պապիկեանի եւ Արթի Յակոբեանի ջանքերուն շնորհիւ, թուրք ներկայացուցիչին աշխատանքները յաղողութիւն չգտան։

Քուէարկութեան աւարտին ընկ. Պապիկեան խօսք առաւ եւ քանատահայութեան երախտագիտութիւնը յայտնեց բանաձեւին թեր քուէարկող կազմակերպութիւններուն։ Այն իր խօսքին վերջաւորութեան շեշտեց, թէ այս բանաձեւը յաղթանակն է ճշմարտութեան եւ արդարութեան եւ դիտել տուաւ, որ Օնթարիոյի եւ Քեպէթի խորհրդարաններուն եւ Քանատայի Մերակոյտին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումն է ետք, Քանատայի Բազմաշակութային խորհուրդին բանաձեւը յաւելեալ բարոյական պարտաւորութիւն կը դնէ Քանատայի կառավարութեան վրայ՝ ընդառաջելու Քանատայի ժողովրդին 75 առ հարիւրի փոփաքին եւ պաշտօնապէս ճանչնալու Յեղասպանութիւնը։

Վերջինիւն բանաձեւը, որ պաշտօնապէս պիտի փոխանցուի Քանատայի կառավարութեան, կը պահանջէ հետեւեալը. - 1915-1923ի Հայկական Յեղասպանութեան 89ամեակին առիթով Քանատայի Բազմաշակութային խորհուրդը կը զօրակցի Քանատայի Մերակոյտի 13 Յունիս 2002 թուականին ընդունուած բանաձեւին, որ կողմէն Քանատայի կառավարութեան

Ա. - Ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը եւ դատապարտել ուրացումի բոլոր փորձերը։ Նոյնպէս կը դատապարտէ պատմական ճշմարտութիւնը խեղաթիւրող զանազան փորձերը՝ վերոյիշեալ աշխատանքները մարդկութեան դէմ ոճիր նկատելով։

Բ. - Ապրիլ 24ը Քանատայի տարածքին հեշակելու ոգեկոծումի օր 1,5 միլիոն նահապետական հայերուն, որոնք զոհը դարձած են 20րդ դարու առաջին Յեղասպանութեան։

Քանատայի Բազմաշակութային խորհուրդը հիմնուած է Քանատայի բազմաշակութային փոքրամասնութիւններու իրաւունքները պաշտպանելու եւ անոնց ձայնը հասցնելու Քանատայի նահանգային եւ դաշնակցային կառավարութիւններուն։ Այս կազմակերպութեան մաս կը կազմեն 32 ազգային փոքրամասնութիւններ, որոնց կարգին են՝ հրեաները, յոյները, իտալացիները, չինացիները, արարները, փորթուգալները, ճափոնցիները, գերմանացիները, ուրբանացիները, փաքիստանցիները, ֆիլիպինցիները, հնդիկները, սերպերը, հայերը եւ այլն։

Այս կազմակերպութեան կերպով կը գտնուի մարաքաղաք Օթթաուայի մէջ եւ նիւթական օժանդակութիւն կը ստանայ Քանատայի դաշնակցային կառավարութենէն։

Քանատայի Բազմաշակութային խորհուրդի այժմու նախագահն է Ընկ. Արթի Յակոբեան։

### Բ. ՀՈԹՈՅԵԱՆ

- ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄՆԵՐ ՕՐԵՆՔԸ ՄԵՆՉԱՅՆՆՈՒԹԵԱՄԲ ԸՆԴՈՒՆՈՒԹԵԱՆ ՔԵՊԵՐԵ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԵ Ֆրանսայի Հայկական Յեղասպանու-

թեան մասին որդեգրած օրէնքէն ետք, այս երկրորդ անգամն է, որ Հայկական Յեղասպանութեան ոգեկոչումն ու ճանաչումը կը դառնան օրէնք։ Այսպէս, 23 տարիներէ ի վեր, ամէն տարի որդեգրել է ետք Հայկական Յեղասպանութեան ոգեկոչման բանաձեւը, Քեպէթի Ազգային ժողովը մէկ քայլ աւելի յառաջ գնաց եւ իրականութիւն դարձուց Հայկական Յեղասպանութեան թիւ 194 օրէնքը՝ զայն միաձայնութեամբ որդեգրելով իր Ուրբաթ, 28 Նոյեմբերի նիստին։

Քանատայի Հայ Դատի յանձնախումբը, որուն տարիներու անընդհատ հետապնդումներուն ու աշխատանքին արդիւնք է թիւ 194 օրէնքի որդեգրումը, հաղորդագրութեամբ մը որդունեց լուրը եւ իր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Քեպէթի խորհրդարանի անդամներին։

Աքատիի շրջանի երեսփոխան Իվան Պորտրոյի կողմէ ներկայացուած օրէնքին ընագիրը հետեւեալն է.

«Նկատելու ունենալով, որ 1980էն ի վեր Քեպէթի Ազգային ժողովը իր միաձայն զօրակցութիւնը յայտնած է Հայկական Յեղասպանութեան բոլոր բանաձեւերուն,

«Նկատելու ունենալով, որ միջազգային գետնի վրայ բազմաթիւ երկիրներ այս վերջին տարիներուն ճանչցած են Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը,

«Նկատելու ունենալով աւելի քան 20 հազար անդամներ հաշուող Հայ գաղութի ներկայութիւնը Քեպէթի մէջ,

«Նկատելու ունենալով, որ մեր Հայ ծագումով համաքաղաքացիները խորապէս պահանջը կը գրան յաւերացնելու անհետացած զոհերուն յիշատակը,

«Նկատելու ունենալով քեպէթցիներուն կամքը, բազմիցս հաստատուած՝ Քեպէթի Ազգային ժողովին մէջ, իրենց Հայ ծագումով համաքաղաքացիներուն հետ բաժնելու 1915ի եղբրական դէպքերուն յիշատակը,

«Նկատելու ունենալով, որ քեպէթցիները միշտ ալ մերժած են, մեր ընկերութեան արժէքներու համաձայն, անհնդուրժողութիւնն ու ցեղային բացառումը,

«Քեպէթի խորհրդարանը կը յայտարարէ հետեւեալը

1.- 24 Ապրիլ կը հռչակուի Հայկական Յեղասպանութեան Ոգեկոչման Օրը.

2.- Տուեալ օրէնքը գործադրութեան կը մտնէ 24 Ապրիլ 2004էն սկսեալ»։

Հակիրճ կերպով անդրադառնալով օրէնքի որդեգրման նախորդող ելովթեւեւ յայտնեց, որ նախեւառաջ խօսք առաւ Իվան Պորտրոյ, որ անդրադարձ

# 7րդ Արուեստ



## ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՉ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓԱՌԱՏՈՒՆ

Անցնող մեկ-երկու ամիսներում եթերը արուեստի լիբրանանեան հրապարակին վրայ տիրող շարժապատկերի լիբրանանեան թէ միջազգային փառատոներու աշխուժեցումը եկաւ միանալու երկրին մէջ անախընթաց բնոյթի շարժապատկերի փառատուն մը: 3 Դեկտեմբերին նշուող Հաշմանդամներու Միջազգային Օրը անուիթով կազմակերպուած Մարդկային իրաւանց եւ Անկարողութեան շարժապատկերի փառատունը տեղի ունեցաւ յաջորդական երկու օրերու վրայ (2 եւ 3 Դեկտեմբեր), «Պերիթ» թատերասրահին մէջ:

Փառատունին ծիրին մէջ ցուցադրուեցան մեծ մասամբ եւրոպական եւ աստրալիական ժապաւէններ, որոնք կ'արժարժէին հաշմանդամներու իրավիճակին եւ անոնց իրաւունքներուն առնչուած հարցեր: Այս նիւթին նուիրուած լիբրանանեան եւ արարական ժապաւէններուն աչքառու բացակայութեան մէջ միակ բացառութիւնն էր լիբրանանաչ երիտասարդ բեմադրիչ Թալին Քիպարեանի «Ազալա ուս ուսերեա» վաւերագրական, 14 վայրկեան տեւողութեամբ, որ Նոյեմբերի սկիզբը արժանացաւ այս տարուան «Տօբիտէյզ» շարժապատկերի փառատունին լաւագոյն տեղական վաւերագրական ժապաւէնի մրցանակին: Ժապաւէնը կը պատմէ երիտասարդ Հաշմանդամի մը մասին, որ իր առաջին սիրոյն եւ մօր նուիրուած բանաստեղծութիւններու գիրք մը կը գրէ:

Փառատունին յայտագիրին մէջ ընդգրկուած լիբրանանեան այլ ժապաւէն մըն է «Չիլոթրոն աֆ Շաթիլա»-ն, որ թէեւ հաշմանդամներու իրաւունքը չէ ընտրած իր բեւ ընարան, սակայն կ'անդրադառնայ իրենց տարրական իրաւունքներէն զրկուած եւ ամէնօրեայ կեանքի դժուարութիւններուն դէմ մարտնչող մանուկներուն իրավիճակին:

Փառատունին ծիրին մէջ ցուցադրուած ժապաւէններուն մէջ յիշարժան է «Տիս ու իր ունիւն» վաւերագրականը, որ պատրաստուած է սորվելու դժուարութիւն ունեցողներու խումբի մը կողմէ եւ ցոյց կու տայ, թէ անոնք ինչպէս բանաստեղծութիւններ կը գրեն եւ նկարներ կը գծեն կենդանի գծանկարի մը համար:

Փառատունը հիմնականին մէջ կը միտի յուսարթակի տակ առնել այն իրողութիւնը, որ հաշմանդամները ընկերութեան համարուած անգամներ են, եւ ոչ՝ անոր անջատ մէկ խումբ: Փառատունին նպատակներէն է նաեւ Լիբրանանի եւ արարական աշխարհի մէջ ստեղծել հետաքրքրութիւն՝ պատրաստելու հաշմանդամներուն իրաւանց հարցերը արժարժող ժապաւէններ: Նշենք, որ այս առիթով կազմակերպուեցան դասախօսութիւններ եւ զրոյցներ, որոնց ընդմէջէն լիբրանանեան լրատուամիջոցներուն կարեւոր դէմքերը իրենց գորակցութիւնը յայտնեցին փառատունին կազմակերպիչներուն:

Նշենք, որ մեր յառաջիկայ թիւով աւելի մանրամասն պիտի անդրադառնանք յատկապէս փառատունին հաշմանդամներու առնչուած լիբրանանեան միակ ժապաւէնին՝ բեմադրիչ Թալին Քիպարեանի «Ազալա ուս ուսերեա» գործին:

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՈՒՆԻՆ ԹԱՓԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

